

ՇԻՐԱԿԻ ԱՍՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ¹

Լուսինե Խ. Ղուեջան

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՀ
Գավառի պետական համալսարան

Ամփոփում

Նախաբան. Շիրակի տարածաշրջանի ժողովրդական բանահյուսության ամենատարածված ու կենսունակ ժանրերից են ասույթաբանական-բանաձևային կառույցները, որոնց մեջ ընդգրկված են խոսքային բանաձևերի տարբեր տեսակներ՝ առած-ասացվածքները, անեծք-օրհնանք-բարեմաղթանքները, երդումները, դարձվածքները, հմայական աղոթքները, ինչպես նաև ժողովրդական ավանդական հավատալիքները: Մեթոդներ և նյութեր. Հոդվածում պատմահամեմատական և տիպաբանական մեթոդների միջոցով, առկա տպագիր, արխիվային և մեր կողմից գրառված մեծաքանակ բանահյուսական նյութերի հիման վրա վերլուծվում և ներկայացվում են Շիրակի ասույթային բանահյուսությանն առնչվող տարբեր ու բազմազան խնդիրներ: Վերլուծություն. Ազգագրական յուրաքանչյուր տարածքի բանահյուսական նյութերի գրառումը, համակարգումն ու հատկապես ուսումնասիրումը համարվում է հայ բանագիտության կարևորագույն խնդիրներից մեկը: Հոդվածում, համակողմանի գիտական վերլուծության են ենթարկվել Շիրակի տարածաշրջանում մինչ օրս ակտիվ կենցաղավարող ասույթաբանական այն ժանրերը, որոնք իրենց մեջ ամփոփում են տարածաշրջանի ժողովրդի վարքութաբան, կենցաղի, մտածելակերպի, բնավորության, ինչպես նաև բարոյահոգեբանական նկարագիրը: Արդյունքներ. Տարածաշրջանի կարճատև բանաձևային կառույցներում զգալի տեղ են գրավում առած-ասացվածքները, դարձվածքները, խոսքի հմայական ներգործության հավատալիքից սերող անեծք-օրհնանք-երդումներն ու հմայական աղոթքները, որոնք աչքի են ընկնում իրենց պատկերավորու-

¹ Հետազոտությունը իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T 6B027 ծածկագրով:

թյամբ, իմաստային խորությամբ և լայնորեն օգտագործվում են անօրյա ժողովրդախոսակցական լեզվում:

Բանալի բառեր՝ Շիրակ, տարածաշրջան, ասույթաբանություն, կենցաղավարում, հմայական-կիրառական բանահյուսություն, ասույթաբանական-բանաձևային կառույցներ:

Ինչպես հղել՝ Ղռեջյան Լ. Շիրակի ասույթաբանական բանահյուսությունը, // ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2023: Հ. 1(26): 86-99 էջեր:

DOI: 10.52971/18294316-2023.26.1-86

PAREMIOLOGICAL FOLKLORE OF SHIRAK

Lusine Kh. Ghrejian

Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA

Abstract

Introduction: One of the most popular and stable genres of folklore in Shirak region is paremiological formulaic structures, which include various types of verbal formulas: proverbs, sayings, curses, blessings, wishes, oaths, phraseological units, words of threat and caress, as well as traditional folk beliefs. **Methods and materials:** On the basis of existing printed, archival and large amount of folklore materials recorded by us, different and various issues related to oral folklore of Shirak are analyzed and presented with historical, comparative and typological methods. **Analysis:** Recording, coordinating and especially studying the folklore materials of each ethnographic area is considered one of the most important problems of Armenian folklore studies. Paremiological genres are active in Shirak region until today, which summarize the behaviour, lifestyle, way of thinking, character, as well as the moral and psychological profile of the people of the region. The article comprehensively analyzes them. **Results:** Proverbs, sayings, curse-blessing-oaths and spells originating from the belief in the magical influence of word, standing out for their imagery, semantic depth and being widely used in everyday folk speech, occupy a significant place in the short-paremic formulaic structures of the region.

Key words: Shirak, region, paremiology, livelihood, magic-applied folklore, paremiological formulaic structures.

Citation: Ghrejian L. *Paremiological Folklore of Shirak*, // "Scientific Works" of SCAS NAS RA. Gyumri, 2023. 1(26). 86-99 pp. DOI: 10.52971/18294316-2023.26.1-86

ПАРЕМИЧЕСКИЙ ФОЛЬКЛОР ШИРАКА

Лусине Х. Креджян

Институт археологии и этнографии НАН, Ереван, РА,

Аннотация

Введение: Одним из самых популярных и устойчивых жанров фольклора Ширакского региона являются паремические структуры формульного типа, в которые включены различные виды словесных формул - пословицы, поговорки, проклятия, благословения, благопожела-

ния, клятвы, фразеологизмы, заклинательные молитвы, а также традиционные народные верования. *Методы и материалы:* В статье, посредством историко-сопоставительного и типологического методов, на основе имеющегося печатного, архивного и записанного нами богатого фактического материала, анализируются и представляются разнообразные и многочисленные проблемы паремиологического фольклора Ширака. *Анализ:* Собираение, систематизация и в особенности изучение фольклорного материала отдельной этнографической области является одной из важнейших задач армянской фольклористики. В статье всестороннему научному анализу подвергнуты до сих пор активно бытующие в Ширакской области паремиологические те жанры, которые обобщают поведение, быт, мышление, нравы, а также морально-психологический облик жителей региона. *Результаты:* Пословицы, поговорки, фразеологизмы, а также, исходящие из веры в магическое воздействие слова проклятия-благословения-клятвы и заклинательные молитвы, выделяющиеся своей образностью, смысловой глубиной, занимают значительное место в кратких формульных изречениях региона и широко используются в бытовом разговорном языке.

Ключевые слова: Ширак, регион, паремия, существование, заговорно-заклинательный, прикладной фольклор, паремические высказывания формульного типа.

Как цитировать: Креджян Л. *Паремический фольклор Ширака*, // “Научные труды” ШЦАИ НАН РА. Гюмри. 2023. Т. 1(26). 86-99 сс. DOI: 10.52971/18294316-2023.26.1-86

ՆԱԽԱԲԱՆ. 19-րդ դարի պատմական հանգամանքների բերումով Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներից Արևելյան Հայաստան գաղթած բազմաթիվ հայ ընտանիքներ բնակություն են հաստատում երկրի հյուսիսարևմտյան շրջանում: Վերաբնակված հայերը՝ իբրև նախնիների ավանդույթների և սովորույթների պահպանողներ ու կրողներ, իրենց հետ բերում են ինչպես տվյալ գավառին բնորոշ կենցաղային սովորույթներ, այնպես էլ հոգևոր, մշակութային բազում այլ արժեքներ (հեքիաթներ, ավանդազրույցներ, զվարճախոսություններ, քնարական բանահյուսության տարաբնույթ ժանրեր, ժողովրդական ինքնատիպ պար ու երաժշտություն):

Շիրակի բանահյուսական ակունքները վաղնջական են, կապվում են հայ ժողովրդի պատմական ընթացքին և համարժեք են համազգայինին, ուստի և տարածաշրջանն աչքի է ընկնում հարուստ բանահյուսական մշակույթով:

Այս առումով նշված տարածաշրջանի ազգագրության և բանահյուսության հանդեպ հետաքրքրությունը առաջ է եկել 19-րդ դարի կեսերին: Բանահյուսական և ազգագրական նյութերի գրառման ասպարեզում բացառիկ դեր ունի բանահավաք, բանասեր Ադեքսանդր Մխիթարյանը, որ շուրջ կես դար հավաքել ու գրի է առել Շիրակի ժողովրդագիտական բազմաթիվ նմուշներ (հեքիաթներ, առածներ, ավանդություններ, անեծք-օրհնանքներ, երգեր ու պարերգեր և այլն), որոնք հետագայում հրատարակվել են «Փշրանքներ Շիրակի ամբարներից» [15] և «Տաղեր ու խաղեր» [16] ժողովածուներում:

Անուրանալի է ականավոր բանահավաք, գավառական բժիշկ Քաջբերունու դերը (Գաբրիել Տեր-Հովհաննիսյան), որի հավաքած բանահյուսական և ազգագրական նյութերը (մանկական խաղերգեր, շուտասելուկներ, աղոթքներ) հետագայում տպագրվել են «Ազգագրական հանդեսի» տարբեր հատորներում [19: 20]: Շիրակի բանահյուսության նմուշներ են առկա նաև Յովհաննես Նազարեանցի «Նախապաշարմունք» [18] ժողովածուում:

Շիրակի հոգևոր և նյութական կյանքի մասին արժեքավոր տեղեկություններ են պարունակում գրողներ Աղավնու և Մկրտիչ Արմենի կողմից հրատարակված պատմագեղարվեստական երկերում [1: 2], ինչպես նաև «Ալեքսանդրապոլ Ազգագրական էսքիզներ (պատմագագրական ուսումնասիրություն)» աշխատությունում [3]:

Այսօր տեղացիների, համայնքապետարանների աջակցությամբ հրատարակվում են Շիրակի մարզի տեղավայրերի մասին առանձին գրքեր («Փանիկ գյուղի պատմություն», «Մուսայելյան գյուղը և նրա բնակիչները», «Գյումրի. Քաղաքը և մարդիկ», «Մեր գյուղը. Մեծ Մանթաշ», «Ախուրյան համայնքի պատմամշակութային հուշարձանները» և այլն), որոնցում բնակավայրերի հիմնադրման, ժողովրդագրական տեղաշարժերի, պատմական հուշարձանների մասին տեղեկություններից բացի, առավել կամ պակաս չափով ներկայացված են տվյալ բնակավայրերի բանահյուսական և ազգագրական նյութերը:

Շիրակի առած-ասացվածքները

Ինչպես հայոց ազգագրական մյուս շրջանների, այնպես էլ Շիրակի տարածաշրջանի ասույթաբանական բանահյուսության մեջ առաջնային տեղ են գրավում առած-ասացվածքները:

Իբրև ակտիվ կենցաղավարող կառույցներ, առած-ասացվածքները գործածվում են բանավոր խոսքում՝ առօրյա-խոսակցական ոճով հաղորդակցվելիս, կամ էլ գրավոր խոսքում՝ ասելիքը դիպուկ ու պատկերավոր դարձնելու նպատակով: Մեղմ ու կուռ կառուցվածքի մեջ առածներն իրենց առարկայական իրականության, մարդկային մըտքերի ու գաղափարական այլաբանական, իսկ ասացվածքներն իրենց ուղղակի իմաստներով ընդգրկում են սոցիալական կյանքի, մարդկային բարքերի ու կենցաղի բազմապիսի հարցեր ու երևույթներ, անդրադառնում են մարդկային փոխհարաբերություններին, տնտեսական-հասարակական նշանակություն ունեցող շատ հարցերի, ներկայացնում են շրջապատող աշխարհագրական միջավայրը, բուսական ու կենդանական աշխարհը և ընդհանրացնելով՝ հանգում ճիշտ եզրակացության: Այսպես, «*Իրա կապերտին բնադուն (պաշարացու հացահատիկ) չի փրկվի*» [13, էջ 314] առածով բնութագրում են վստահություն չներշնչող մարդուն, «*Հացը հետաւորել է, մենք փետաւորել, էլի ետևիցը չենք հասնում*» [15, էջ112] առածում շոշափվում են սոցիալական խնդիրներ կամ՝ «*Ռայաթի (ժողովուրդ) ձենը զարբագանի (թնդանոթ) ձենից բարձր է*» [7, էջ 0919] առածում արտահայտված է ժողովրդի հավաքական ուժի գաղափարը: Ժողովրդի միասնական ուժն անկասելի է, ինչը կարող է վտանգ առաջացնել, ուստի առաջ է գալիս վարչաքաղաքական նրբերանգ ունեցող «*Ժողովրդին օսկոռ քրցելով չես պայե*» [7, էջ1201] առածը, և առաջարկվում է որոշակի լուծում. «*Թե որ գուգեն ժողովրդի ձենը դու չըկա, ոռերին թող միշտ կարագ քրսեն*» [7, էջ 1202]:

Ժողովրդական իմաստությունից ծնված առած-ասացվածքների օրինակներ են նաև «*Բոշից ծընված փաշեն բիտուկին կրգրկե ճաշեն*» [7, էջ1301] այսինքն՝ կարիքի, գրկանքների մեջ ապրած անձը, իշխանություն ձեռք բերելով հպատակներին ենթարկում է գրկանքների, որը միանգամայն համախոս է «*Բոշեն փաշա չի դառնա*» հայտնի առածին: Մարդկանց բնութագրելու նպատակով ժողովուրդը ստեղծել է բազմաթիվ ա-

առած-ասացվածքներ, ինչպես օրինակ՝ «Օր ըսիս տանձ է, կըստ՝ չէ, գանձ է» (կամակոր, ինքնասածի մարդու մասին է, [17, էջ 87], կամ՝ «Ինասու ինաս է, անունս՝ քոռ Մուրաստ» [15, էջ 105], «Օխտը գումէշ կուտամ, մեղայ Աստծու չեմ ասի» [15, էջ 126]: Աշխատավոր ժողովրդի առօրյա կենցաղից է ծագում «Հարի խաչին էրան, էնորից հետն էրթան» առածը, որտեղ զգուշացվում է, որ մինչև Մուրբ խաչն արևելյան քամին է փչում, և անհրաժեշտ է հացահատիկը դարմանից հանել, իսկ Մուրբ խաչից հետո քամին ուղղությունը փոխում է, ուստի հնարավոր չէ երան անել [17, էջ 83]:

Յուրաքանչյուր տարածաշրջան ունի իրեն բնորոշ նկարագիրը, և մարդիկ բնութագրվում են տվյալ միջավայրին բնորոշ յուրահատկություններով, ազգային, հոգեբանական, կենցաղային ու մշակութային առանձնահատկություններով: Այսպես՝ «Գյուլ-բեգիկ լավ լողջի չեն, որովհետև ձուկ ուտելու սովոր չեն» [7, էջ 0919], փոխարենը «Լենինականցիք ամեն ձևի ու ֆորմի մուգիկա սիրող մարդիկ են, ըսկըսած Բախից, վերջացրած բարի-բախով» [7, էջ 1112]:

Տարածաշրջանին բնորոշ առած-ասացվածքների օրինակներից են՝ «Փրթած ապուրը բիդունքն էլ կուտեն» [7, էջ 0919], «Խորոզի խորոզլամիշ էղնելը հավերի շատ էղնելուց ա» [7, էջ 0919], «Մարդիկ կան կաթով կըլողնան, մարդիկ էլ կան պարտքերի մեջ կըլողնան» [7, էջ 1301], «Մարդիկ կան սաղ օրը թան կըխանեն, հըմը քաբելու ֆայտոնով կերթան» [7, էջ 1203], «Բիդուքիս չարչրանքը չորս տախրտկի համար է, էն էլ մեզի չի մընա» [7, էջ 0919], «Մեծ սարերն ինքն է ստեղծե, պգտիկները վախից են էղե» (ամբարտավանի մասին), [13, էջ 321] և այլն:

Շիրակի առած-ասացվածքները կազմությամբ հիմնականում կա՛մ միանդամ են՝ կազմված մեկ պարզ նախադասությունից՝ «Մուկն էլ օրոճ կենե» [17, էջ 83], «Իշու խտոնուկն ձիուց գնցնա» [17, էջ 83], «Փարա ունենալուց բանձրը ֆայմն ա» [7, էջ 1301], «Գալած մալի (ունեցվածք) գլխին քար չեն քցե» [13, էջ 310], «Լուկեն ու կուբին իրարից հեռու չեն» [7, էջ 1211] և այլն, կա՛մ կազմված երկու, հազվադեպ՝ նաև ավելի անդամներից, որոնք միմյանց լրացնում են և՛ իմաստով, և՛ հանգակցությամբ: Օրինակ՝ «Էնպես ժուռ գու գա (ման գալ, պտտվել), կըսես թե մանդը սարերը ինքն է ըստեղծե» [13, էջ 312], Արտն խախուտ, մահանեն կարկուտ» [17, էջ 83], «Ինչքան հագնիս դումաշ ու խաս, էլի կըսեն՝ ծըռտոտի հարս» [4, էջ 0918], «Վարը վարել եմ, վարոցն էլ՝ թաղել եմ» (այսինքն՝ ամեն բան վերջացել է), [7, էջ 1211], «Անբախտ մարդկանց դարդ ու ցավը երալմասի պես մի անգամ ցանած է հողի մեջ, անընդհատ կըծլի ու կըծլի» [7, էջ 1211], «Անբախտ մարդն որ դավին հեծնի, էլի շունը ոտը կը խածե» [13, էջ 308], «Զին նստալ՝ աստված մոռցալ, ձիուց իջալ՝ ձին մոռցալ» [15, էջ 113], «Որք գառը թե մենծցնես բերանդ կը եղոտի, որք տղին թե պահպանես՝ բերանդ կվառի» [15, էջ 120], «Պարտքը որ կայ դավի ձագ է, քանի պահես կմենծանայ էլ դոնից չի հալքի» [15, էջ 121] և այլն: Ի դեպ ամենապարզ երկանդամը կազմված է սոսկ երկու բառից՝ «Կիսափոր-կիսամահ» [15, էջ 317], Անթություն՝ անամոթություն» [7, էջ 1208], «Մաղություն՝ սուլթանություն» [15, էջ 122], «Բարեկամացանք՝ բարեբարացանք» [15, էջ 96] և այլն:

Խոսքի առավել կենդանի, պատկերավոր ու անմիջական դրսևորում ենք տեսնում երկխոսական առած-ասացվածքներում, որը տեղի է ունենում երկու անձանց,

առարկաների, մարդու և կենդանու կամ երկու կենդանու միջև կատարվող խոսակցության, հարց ու պատասխանի ձևով: «Երկխոսությունն առհասարակ առավել բնորոշ է ժողովրդական առակներին: Երկխոսական առածները մեծ մասամբ ծագում են առակներից և այդ առումով շարունակում են պահպանել դրանց երկխոսական հատկանիշը»,- նշում է բանագետ Ս. Հարությունյանը [12, էջ 8]:

Բերենք առակներից ծագած երկխոսական առածների օրինակներ:

Քամին մարագին ասաց՝ «Դուդդ բաց դարման բերես»: Մարագն ասաց՝ «Իմ դարմանը չտանես, քո բերածը քեզի էղնի» [21, էջ 1312]:

«Իշունը ըսին,-«Աչքդ լուս, քեզի քուռակ էղավ,-ըսավ՝ «Ի՞նչ էնես, գարին պրդի առաջիցս առնի, խո բեռը շալկիս չի առնի» [21, էջ 1318] և այլն:

Այսպիսով, առածները, անջատվելով առակներից, ձեռք են բերում ինքնուրույն կիրառություն: Ներկայացնենք տարածաշրջանում առկա երկխոսական առածների քանի մի օրինակ ևս: *«Սղնին հարցուցին,- ուրդից գիկաս,- ըսեց,- անվառել թնդրեն, կոված տնեն»* [17, էջ 85], *«Կատվին ասին հերդ է լաւ, թե մերդ, ասաց. նաս՝, նաս՝»* [15, էջ 109] և այլն:

Հանդիպում են նաև միախոսական բնույթի առած-ասացվածքներ, ինչպես օրինակ՝ *«Խոզն ասաց, ճուտերս որ շատացան, պարզ ջուրը գլխիցս կտրուեց»* [15, էջ 108], *«Էշն ընկավ գարու հորը, ասավ՝ էաւ լավ է, քան մեր ախոռը»* [15, էջ 103], *«Ծառը կացնին ասաց. ընդոր ես կարենում ինձ կտրել, որ կոթդ ինձանից է»* [15, էջ 108] և այլն:

Բացի վերը նշվածները, զգալի քանակ են կազմում խրատական դաստիարակչական բանաձևային կառույցները, որոնք սերում են մարդկային դարավոր կենսափորձից: Օրինակ՝ *«Աջով տուր, որ ձախով առնես»* [15, էջ 94], *«Մի՛ ըսեր, որ չի լսես»* [15, էջ 117], *«Գիլի աղբրություն մի՛ անի»* [15, էջ 98], *«Կրունկ կոխողի գոխն կոխէ»* [17, էջ 86], *«Դրկցի աշխատանքին, ոչ թե ունեցածին թամահի»* [15, էջ 100], *«Կտոր կառնիս քանթին իշէ, աղջիկ կառնիս մորն իշէ»* [17, էջ 83], *«Ծառը տես, պտուղը քաղէ»* [4, էջ 2927], *«Բախտը մի՛ տա նամարդի ձեռը»* [4, էջ 2927], *«Չը փորձած ձիու ետնից մի՛ անցնիլ»* [15, էջ 121], *«Առաջ ասեղը քեզ խրէ, յետոյ մախարթն ընկերիդ»* [15, էջ 121], *«Կարգվածի աչքով աղջիկ առ, ազապի աչքով՝ ձի»* [15, էջ 108] և այլն: Կատակասեր շիրակցուն բնորոշ է ինքնատիպ հումորը. *«Ախպոր պահած քիրը մեռնի, տեքոր պահած հարսը, փեսի պահած գոնքաչը* [13, էջ 268], *«Քառտուն գող մե չպլաղի չեն կարացել թալանել»* [13, էջ 241], *«Խելք բաժնելու վախտը յուրտե՞ղ էիր, պատասխան- Յիրար հետ չէի՞նք»* [4, էջ 2629] և այլն:

Դարձվածքներ

Տարածաշրջանի ասույթաբանական բանահյուսության մեջ զգալի տեղ են գրավում դարձվածքները, որոնք կայուն, վերաիմաստավորված նշանակությամբ բառակապակցություններ են՝ [5, էջ 5] բաղկացած երկու և ավելի ազատ իմաստ ունեցող բաղադրիչ բառերից, որոնց մեջ կարող են առկա լինել ոչ միայն փոխաբերական, այլև ուղիղ իմաստներ: Ինչպես առած-ասացվածքները, այնպես էլ բանաձևային այս տեսակները ակտիվ կենցաղավարում են և իբրև խոսքի կարճասույթ բանաձևեր, առատորեն գոր-

ծածվում են Շիրակի խոսակցական լեզվում՝ այն դարձնելով պատկերավոր ու արտահայտիչ:

Պատմաաշխարհագրական տարածքի բուսական ու կենդանական աշխարհը, սովորույթները, միջավայրը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները ներկայացնելուց բացի, բանաձևային այս տեսակն անդրադառնում է և՛ իրական, կոնկրետ անձանց, ովքեր իրենց սրամիտ, զավեշտական և արտասովոր արարքներով դարձել են այս կամ այն ասույթի կերպար-խորհրդանիշ, և՛ տեղի ունեցած կենցաղային դեպքերին ու իրադարձություններին: Բանաձևային այս տեսակները ընդհանուր ազգային-ասույթային բանահյուսությունը հարստացրել են նաև տարածքային ծագում ունեցող ստեղծագործություններով:

Ներկայացնենք Շիրակի տարածաշրջանում գործածվող դարձվածքների օրինակներ:

Այսպես՝ Արթիկի շրջանի գյուղերում տարածված *«Հոռոմի թիթեն»* դարձվածքը խորհրդանշում է առատություն, բերրիություն: Ըստ հիշյալ ասույթի ծագման պատճառական գրույցի՝ Հոռոմ գյուղի արոտավայրերում եղած թիթենի (ժղ. ցան) առատությունը տեղացիները լայն իմաստով կապել են հաջողության հետ՝ ասելով. *«Հոռոմի թիթենը վրես էղնի նոր մեռնիմ»* [14]: Տարածաշրջանում լայն տարածում ունի *«Ձոնքչի ձվածեղ»* արտահայտությունը, որը հումորային երանգով է արտաբերվում, հանդիպում է ազգագրական այլ տարածաշրջաններում: Ընդ որում յուրաքանչյուր տարածաշրջան յուրովի է մեկնաբանում ասույթի ծագումը: Օրինակ, Նոր Բայազետում հարսի մայրը՝ զոքանչը, հարսնատես եկած փեսային հյուրասիրել է ձվածեղով, որի վրա մի քանի կաթիլ իր մեզից է սրսկել, որպեսզի փեսայի սերը հարսնացուի հանդեպ սաստկանա: Այս նախապաշարման իմաստն ակնարկված է հետևյալ ժողովրդական երգում. *«Փեսեն էկաւ տեղ արեք, // Շոով ձուածեղ արեք»* [8, էջ 9-65]:

Շիրակի տարածաշրջանում վերոնշյալ ասույթի՝ բարբառային, խոսվածքային առանձնահատկություններով և արագախոսությամբ արտաբերելը հանգեցրել է զավեշտի: Ձոքանչը, ցանկանալով փեսային հյուրասիրել տաք ձվածեղով ասում է՝ *«Քակեցի (քա՛՛ կոչական, կեցի՛ մնա), տաք-տաք կեր, նոր կերթաս»* [14]: Շիրակցին հումորով է արտաբերում *«Ձոնքչի էփած ձվածեղը համով կըլնի»* ասացվածքը:

Կոնկրետ իրական անձնավորությունների հետ են առնչվում *«Ձնգոյի վարտիկը»*, *«Մաթոսի առևտուրը»* [6] դարձվածքները:

Առաջինի հիմքում ընկած է ամենուրեք իբրև շտապ օգնություն հայտնվող կնոջ՝ Ձնգոյի մասին պատմությունը, ըստ որի՝ Ձնգոն բուժքույր է եղել և օգնելու նպատակով այցելության է գնացել բոլոր հիվանդներին: Չկար մի տուն, որ Ձնգոն մտած չլիներ, ուստի շատ ման եկողին, ամեն տեղ երևացողին համեմատել են Ձնգոյի, ավելի կոնկրետ Ձնգոյի վարտիքի հետ: Երկրորդ դարձվածքը խորհրդանշում է մարդու միամտությունը և խեղճությունը: Մաթոսը խեղճ ու այն աստիճանի միամիտ է եղել, որ հինգ կոպեկով ձու է գնել, նավթավառով եփել ու խաշած ձուն երեք կոպեկով վաճառել է: Ասում են՝ *«Մաթոսի քյարն էղել է հավգթի խաշած ջուրը»*:

Վահրամաբերդում լայն տարածում գտած *«Մահանա էրա ու տուր»* դարձվածքի ստեղծման համար հիմք է ծառայել Ժոժիկի՝ կնոջն անտեղի ծեծելու պատմությունը

և, Ժոժիկի կնոջ համար, ինչպես ասում է ժողովրդական առածը, «Օրը մեզ է, ծեծը՝ հագար»: Հարևանին զարմացնում է այն, թե ինչ պատրվակով է Ժոժիկը ամեն օր ծեծում կնոջը, քանի որ ինքը ոչ մի պատրվակ չի գտնում իր կնոջը ծեծելու: Ժոժիկը խորհուրդ է տալիս՝ ասելով. «...Մի օր բոստանը ջրելուց օր տուն գաս, ոտդ տնգե, թող Լիզան սապոգդ հանե: Դու ոտիդ բույթը մեջը ձրգե, որ սապոգդ դուրս չգա: Դու էլ մահանա էրա ու տուր»: Եվ համանման իրավիճակում, երբ դիմացինին պատժելու պատճառ չկա, ժողովուրդը կատակով ասում է. «Չի ըստե՛ Ատեի Ժոժիկը՝ մահանա էրա ու տուր» [6]:

Տարածված է «Տեփոյենց քյամարը» դարձվածքը, որի համար հիմք է ծառայել մեծ գերդաստանում մեկ քյամար ունենալու պատմությունը, և ով քնից շուտ է արթնացել, նա էլ կապել է այն: Մինչ օրս որևէ իր կամ առարկա անընդհատ շահագործելիս ասում են՝ «Տեփոյենց քյամարն է»:

«Տեփոյենց հորթի օրն ընկնելը» դարձվածքը արտահայտում է չափից շատ ուտելու իմաստը:

Այսպես՝ նմանատիպ ասույթների, դարձվածքների հորինման հիմնական աղբյուրը իրական կյանքում կատարված դեպքերն են: Յուրաքանչյուր ասույթ արդյունք է տվյալ վայրում տեղի ունեցած կենցաղային դեպքերի ու իրադարձությունների և, անշատվելով բուն կենցաղային գրույցներից, վերածվում է դարձվածքային ընդհանրացման:

Ուսումնասիրվող միջավայրում ստեղծված և տարածված դարձվածքներից է «Չիթած գոմեշ» (սև և փայլուն երես ունեցող), «Դարմընի տրկի ջուր» (ծածուկ, թաքուն գործող), «Մալադոնդի» (կամազուրկ), «Քաքի մեջ հլուն գտնել» (մեծամտանալ)[6] «Բմբլե բերդ» (անկայուն), «Անձեն թվանք» (երեսանց փափուկ, բայց դաժան մարդ), «Բանդ էղնել» (կաշկանդված լինել), «Արփաչայր պաժար է յնկե» (հետաքրքիր, անսովոր երևույթ) [4, էջ 2627-2629] և այլն:

Այսպիսով, Շիրակի տարածաշրջանը հարուստ է նման բանաձևերով, որոնց հիմքում ընկած են ժողովրդական ճշգրիտ մտածողությունը, իրերն ու երևույթները գնահատելու օբյեկտիվ ընկալումը: Վերոհիշյալ տեսակների մեծաքանակ դրսևորումներն ապացույց են այն բանի, որ այս ժանրերը ամենակենսունակն են ու մեծ մասսայականություն են վայելում նաև ազգագրական այս տարածաշրջանում:

Անեծք, օրհնանք

Խոսքի գորության, հմայական ներգործության հավատալիքից են սերում անեծքները, օրհնանքները, բարեմաղթանքները, երդումները, որոնք ինչպես ազգագրական մյուս շրջաններում, այնպես էլ Շիրակի տարածաշրջանի բնակիչների մեջ մինչ օրս պահպանվել ու կենցաղավարում են:

Անեծքը և օրհնանքը, իբրև մարդու վատ և լավ արարքների հոգեբանական արձագանքներ, բանավոր դրսևորվում են ցանկությանը համապատասխանող չար կամ բարի խոսքերով:

Անեծքների իմաստային հիմնական խմբերում երևան են գալիս պատժի տարբեր տեսակներ՝ սկսած ամենադաժան եղանակներով մեռնելուց, մարմնական ու հոգեկան ամենատարբեր հիվանդություններով տառապելուց մինչև սոցիալական ու կրո-

նաբարոյական բնույթի պատիժներ, ինչպես, օրինակ՝ «Հողն ու մոխիրը գլխիդ տամ, բաթմիշ ըլնիս» [15, էջ136], «Ձուխտերիդ խերը չտեսնես, մի օր մեռնեն» [15, էջ138], «Օխտը տարի մեկ կողքի տքաս իլլաճ չգտնես» [15, էջ137], «Աստված դավուլ, գուռնով տունդ քանդե» [4, էջ 2631] և այլն:

Անեծքի ամենատարածված տիպը պարզ ու հակիրճ բանաձևերն են: Օրինակ՝ «Անունդ աշխարհքից վերանայ» [15, էջ 134], «Դուռդ սև քարով շարուի» [15, էջ 135] և այլն: Շատ են հանդիպում են նաև բաղադրյալ ու ծավալուն տիպեր, օրինակ՝ «Չայդանը եռա, թափի քու հոր տանուտեղի վրա» [4, էջ2627], «Քոքդ աղանձուի, չորնայ, անորդի մնաս» [15, էջ 139], «Օր ու մեջ ապրես, էն էլ սև օրով ու դարտով» [15, էջ 139] և այլն, ինչպես նաև չափածո անեծքներ.

*Օագրոտիս, ծակ-ծակ շաքիկ հակնիս,
Վրրիդ ջրերն ելնին, էրտան,
Նըստիս՝ միսըդ թափի,
Կայնիս՝ օսկոռըդ: [6]*

Ինչպես ազգագրական մյուս շրջաններում, այնպես էլ Շիրակում նկատվում է որոշ անեծքների տեղայնացում: Այսպես, ավանդական «Տերտերը դաքիտ քյնա», «Տերտերը առաջիցդ գնա», «Տերտերը քե տանի» անեծքները, որ կապվում են թաղման ծիսակարգի հետ, օրինակ, Տավուշի Դիտավան գյուղում վերածվել է «Նիկուլը դաքիտ քյնա» [9, էջ 187], Գեղարքունիքի Գավառ քաղաքում՝ «Կթունի Մնացը քե տանա», «Գառնիկը հառչիցըդ էթա» [14] ձևերին, որովհետև վերոհիշյալ անձնավորությունները միշտ թաղման թափորի առջևից տարել են դագաղի կափարիչը կամ՝ ճանապարհ բացել: Այս նույն ծիսակարգի հիման վրա է Շիրակի Հոռոմ գյուղում ստեղծվել «Դարենը վրեդ կարդա» անեծքը: Դարենը Հոռոմում վաստակաշատ ուսուցիչ է եղել և որպես գրագետ մարդ դամբանական է կարդացել: Եվ մեկը մյուսին վատը կամենալիս, անիծելիս կամ ուղղակի՝ հումորով ասել է վերոնշյալ անեծքը [14]:

«Մահվան անձնավորումներից ամենահաճախադեպն ու բազմապիսին Գրողն է» [10, էջ 391], որն իր անվամբ կապվում է գրի ու գրչության հետ, սակայն ոչ թե հասարակական մշակութաբանական առումով է ըմբռնվում, այլ աստվածային, անդրաշխարհային ընկալումով՝ կապված մարդու կյանքի երկու գլխավոր փուլերի՝ ծննդյան և մահվան հետ [10, էջ 393]: Ոչ վաղ անցյալում տարածաշրջանում, ըստ մեր բանասացի (Սևակ Մարգարյան, ծնվ. 1978), նույն գործառույթը կատարել է նաև քահանան, ուստի գրողին նույնացրել են քահանայի հետ, որը գրառում և իր ծոցագրպանում էր պահում ծնվածների ու մահացածների անունները: «Այստեղից է ծագել է «Գրողի ծոցն էրթաս» անեծքը», - կատակով բացատրում էր բանասացը:

Անեծքին, հատկապես անիրավ ու անարդարացի, հակազդելու համար ընդունված է հանդես գալ պատասխան բանաձևով, որը թուլացնում կամ չեզոքացնում է անեծքի ուժը և, ինչու չէ, մեղմում մարդու հոգու զայրույթը: Օրինակ՝ պատասխան բանաձևերից տարածված են «Անեծքդ բերնիցդ դուրս գա՝ ծոցդ թափի, գոտիդ էլ դայիմ կապած էղնի, օր ծոցեդ չը թափի» [4, էջ 2631], «Բերանեդ յելածը գիրկդ թափի» [4, էջ 2632], այսինքն՝ բերանից անիրավացիորեն դուրս եկած չար խոսքը հակադարձվում և հետ է

դառնում անիծողին, որի գաղափարը թերևս լավագույնս դրսևորվել է «Անիրավ անեծք իր տիրուն է» և «Անեծքն անիծողին կդառնա» ասացվածքներում [13, էջ 2-302]:

Ուշագրավ են օրհնանքներն ու բարեմաղթանքները: Դրանք խորհմաստ են, համակված են մարդասիրությամբ և լայնորեն կիրառվում են ժողովրդական կյանքի տարբեր բնագավառներում՝ սկսած առօրյա-կենցաղային-խոսակցական «Արևդ ապրի», «Ջիվան ումբր ու արևդ երկարի» [15, էջ 132] և այլն, մինչև ծիսակենցաղային որոշակի միջավայր (ծննդյան, հարսանեկան, թաղման ծես և այլն): Հնայական այս բանաձևերում շեշտվում են նյութական, մարմնական, հոգեկան կամ բարոյական վիճակի ապահովությունը և օրհնվող անձին ամեն տեսակ չարից, փորձանքից ազատելու, պահպանելու ցանկությունները: Օրինակ՝ «Ավուր շնորհքը տանիցդ անպակաս ըլնի» [15, էջ 128], «Աստված հացդ տանիցդ անպակաս անե» [15, էջ 127], «Աստված փորձանքից հեռու պահե» [15, էջ 127], «Բախտավոր մանուկ ըլնի նորածինդ» [15, էջ 128], «Կանանչ մեռոնի շնորհքը տան ու տեղիդ վրա ըլնի» [15, էջ 128], «Մի բարձի ծերանաք, միասին ապրեք» [15, էջ 131] և այլն:

Երդում և աղոթք

Հնայական-կիրառական բանահյուսության նախնական կարևոր տեսակներից են երդումներն ու աղոթքները:

Բոլոր ժամանակներում էլ երդվողը սովորություն է ունեցել վկայակոչելու ինչպես Աստծուն, սրբերին, հոգեհարազատ ու նվիրական անձանց (հայր, մայր, եղբայր, որդի), այնպես էլ սուրբ համարվող և իբրև այդպիսին ընկալվող նվիրական սրբություններն ու առարկաները (ճրագ, լույս, օջախ, արև, Ավետարան, խաչ, հաց և այլն)՝ ապացուցելու իր ճշմարտացիությունը, հավատարմությունն ու նվիրվածությունը:

Գոյություն ունի երդումների երկու հիմնախումբ՝ երդում-վկայակոչումով՝ «Ամենափրկիչը վկայ, որ դու գրպարտում ես» [15, էջ 140], «Էս հացը վկայ, որ...» [15, էջ 140], «Էս ճրագի լուսը վկայ, որ...» [15, էջ 140] և այլն, և երդում-անեծքով՝ «Բարեչական կրակի գամ, թե...» [15, էջ 140], «Գետինն անցնեմ, թե...» [15, էջ 140] և այլն: Տարածաշրջանում հանդիպում են նաև երդման այնպիսի օրինակներ, երբ երդման պայմանը, բացի սովորական անեծքից, նաև անպատվաբեր խոսք է: Օրինակ՝ «Շան կաթ կերած ըլնեմ, թե ուղիդը չասեմ» [15, էջ 142], «Շանից ծնուած ըլնեմ, թե սուտ է ասածները» [15, էջ 140] և այլն:

Երդման առարկաները մեծ մասամբ պաշտամունքային, այսինքն՝ քրիստոնեական, կրոնական և ժողովրդական հավատալիքների ոլորտներից են վերցված (եկեղեցի, Ավետարան, խաչ, մեռոն): Կրոնածիսական պաշտամունքի սրբազան առարկաներից բացի, տարածաշրջանից գրառված երդումներում կարևոր տեղ են գրավում նաև բնական (երկինք, գետին, ծով, արև և այլն), տնային-կենցաղային ու տնտեսական օգտագործման իրերն ու առարկաները (ճրագ, կրակ, լույս, օջախ, հաց և այլն):

Տարածված են հիմնականում երդումների պարզ տիպերը՝ կառուցված մեկ բայի վրա՝ «Աստված վկա» [4, էջ 2629], «Առեք-կերեքը վկա» [4, էջ 2629] և այլն: Զգալի թիվ են կազմում նաև բաղադրյալ տիպերը՝ կառուցված մեկից ավելի բայերի վրա կամ բաղադրված մեկից ավելի պարզ տիպերի հարակցումից: Ընդ որում, Շիրակի բաղադրյալ

տիպերը ըստ բայերի քանակի լինում են երկանդամ, եռանդամ, հնգանդամ: Օրինակ՝ «Երկինք, գետին վկա, որ...» [15, էջ 40], «Իմ արև, քու արև» (գեղջված ստորոգյալով, [4, էջ 2629], «Աստուած, երկինք, գետինք, ծով, ցամաք, որ չը գիտեմ» [15, 140] և այլն:

Հմայական բանահյուսության բարդ բանաձևերի խմբին պատկանող մյուս տեսակներից են աղոթքները, որոնք խոսքի գործությամբ, մարդու և նրա շրջապատող աշխարհի վրա ներգործելու միջոցներից բացի, նպատակ ունեն պահպանելու մարդուն, նրա ունեցվածքը, աշխարհը ամեն տեսակ չարիքներից ու չար ոգիներից:

Տարածաշրջանի հմայական աղոթքների կրողները հիմնականում այն անհատներն են, որոնց այդ շնորհքը «տուածուրիկ» է, և նրանց բոլոր ասածները իրականություն են դառնում [15, էջ 189,], կամ էլ սրբի տվածներ են, որոնց աղոթքը «մեկէն ի մեկ ցաւը դանակի պէս կը կտրէ» [15, էջ 190], իսկ աղոթելն ու վախ բռնելը ընդունված են եղել իբրև «բժշկական միջոցներ» [15, էջ 190]: Տարածաշրջանի աղոթքներն ըստ գործառույթի կարելի է բաժանել հետևյալ խմբերի. ա) չար աչքի, բ) զանազան հիվանդությունների (ականջացավի, փորացավի, կոկորդում պատառ մնալու, նորենցքի, ճուճի կամ մսահանգուստի), գ) ծննդկանի, նորածնի դ) վախի, դ) չար ուժերի կանխարգելման (ալի ու թպղայի), ե) հմայական կապքի և պահպանության (գելկապի, գողկապի):

Չար աչքից, ուժերից, տարբեր հիվանդություններից, պատահարներից պաշտպանվելու նպատակով կիրառվել են նախապես աղոթքով և դրան ուղեկցող հատուկ ծիսական գործողությամբ պատրաստված, գերբնական գործությամբ օժտված պահպանակներ՝ ինչպես, օրինակ, կապույտ ուլունքներ (աչքաուլունքներ), փայտյա և մետաղական առարկաներ, փուշ և այլն: Չար աչքից, վախից և այլ հիվանդություններից պաշտպանող աղոթքներին ուղեկցող ծիսաարարողություններում մեծապես կարևորվում են աղոթողի թուքն ու մետաղական առարկաները՝ դանակ, ասեղ և այլն, քանի որ ըստ ժողովրդական հավատալիքի՝ թուքն ու մետաղը ոչնչացնում են չար ուժերի, ոգիների, չար աչքի ազդեցությունը: Աղոթողը վերցնում էր դանակ կամ ասեղ, որով «ստեպ-ստեպ» խաչակնքելով և «թո՛ւ, թո՛ւ» ասելով աղոթում էր [15, էջ 188-198]: Օրինակ՝

Հայր մէր, որ յերկինս էս

Չար աչկը՝ չար փշին,

Չար փուշը՝ չար կրակին.

Չար աչքը շիտկուէլ է ձեր դուռը.

Աչքը՝ քօռ, ձեռը՝ չօլախ, լեզուն՝ բիբառ,

Էլ չգայ ձեր դուռը [15, էջ 190]:

Աղոթքն ավարտվում է բանադրական հմայական բանաձևով՝ անեծքով, որը ժողովրդական հմայական աղոթքներում լայն դրսևորում ունի: Փուշն իր ծակող, խոցող հատկությամբ, իբրև չարահալած, ժողովրդական հավատալիքներում և հմայական աղոթքներում հանդես է գալիս որպես չարից, չար աչքից պաշտպանվելու հմայական միջոց, ինչը երևում է նմանատիպ մյուս աղոթքներում:

Ընդհանրապես աղոթողն իր աղոթքներում որպես բարի ոգիներ հանդես եկող սուրբ անձանց օգնությամբ ու վկայակոչմամբ (Քրիստոս, Օխտն անուն, Կօչայ զինատր սուրբ Գեորգ և այլն), սուրբ առարկաների միջոցով (Փատիշահ Աւետարան, Հալիւոր

Աւետրան, Մարգարեաց գավազան, Լուսավորչա հողաթափ և այլն), ինչպես նաև հմա-
յագործությամբ բուժում է տարբեր հիվանդություններ:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Ուսումնասիրելով Շիրակի տարածաշրջանի ասույթաբանա-
կան բանահյուսության վերոնշյալ ժանրերը՝ նկատելի է դառնում, որ վերջիններս իրենց
ինքնատիպությամբ, խոսքի պատկերավորությամբ և դիպուկ ակնարկներով արտա-
հայտում են պատմաազգագրական նշված տարածաշրջանի ժողովրդի աշխարհայաց-
քը, հոգեբանությունը, մտածողությունը, պատմությունն ու իրականությունը գնահատե-
լու ունակությունը:

Տարածաշրջանի կարճատյոժ բանաձևային կառույցներում իրենց պատկերա-
վորությամբ ու իմաստային խորությամբ առաջնային տեղ են գրավում առած-ասաց-
վածքները և դարձվածքները, որոնք ընդհանուր ազգային ասույթային բանահյուսու-
թյունը հարստացրել են նաև տարածքային ծագում ունեցող ստեղծագործություններով:

Հմայական բանահյուսության հիմնատեսակները՝ անեծքները, օրհնանքները,
երդումներն ու աղոթքները, մինչ օրս պահպանել են իրենց կիրառական գործառույթը և
այսօր էլ շարունակում են ակտիվ կենցաղավարել տարածաշրջանի ժողովրդի կյանքի
տարբեր բնագավառներում:

Գ ր ա կ ա ն ու թ յ ո ն

1. Աղավնի «Շիրակ»: Երևան: Հայպետհրատ: Գիրք 1-2, 1963, 520 էջ, 1964, 538 էջ:
2. Արմեն Մկ. «Հեղինար աղբյուր»: Յերեվան: Պետ. հրատ.: 1936: 206 էջ:
3. Բազեյան Կ., Աղանյան Գ. «Ալեքսանդրապոլ. Ազգագրական էսքիզներ (պատմաազգագրա-
կան ուսումնասիրություն)»: Գյումրի: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2014: 117 էջ:
4. Բարսեղյան Պ. Շիրակի ժողովրդական բանահյուսությունից: Հնագիտության և ազգա-
գրության ինստիտուտի բանահյուսության արխիվ FF IV: 2627-2955 : 1966:
5. Բեդիրյան Պ. Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն: Երևան: «Լույս» հրատ:
1973: 231 էջ:
6. Գալստյան Հ. Դաշտային բանահյուսական նյութերի անձնական հավաքածու:
7. Գևորգյան Ա. Շիրակի ասույթներ, սրամտություններ: Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի բանահյուսության արխիվ FFXII: 0917-1304: 1973:
8. Լալայան Ե. Նոր Բայազետ: Ազգագրական հանդես, գ. XVI, Թիֆլիս: Տպարան Կ. Մար-
տիրոսեանցի: 1907: էջ 268 էջ:
9. Խեմչյան Է. Տալուշի բանահյուսական ժառանգությունը: Երևան: ՀԱԻ հրատ., 2020: 23 էջ:
10. Հարությունյան Ս. Հայ առասպելաբանություն: Բեյրութ: «Համազգային» տպ.: 2000: 528
էջ:
11. Հարությունյան Ս. Հայ հնայական և ժողովրդական աղոթքներ: Երևան: ԵՀ հրատ.: 2006:
504 էջ:
12. Հարությունյան Ս. Աստղին լսող է պետք: Երևան: «Արևիկ» հրատ.: 2004: 144 էջ:
13. Ղանալանյան Ա. Առածանի: Երևան: Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ.: 1960: 398 էջ:
14. Ղոնջյան Լ. Դաշտային բանահյուսական նյութերի անձնական հավաքածու:
15. Մխիթարեանց Աղ. Փշրանքներ Շիրակի ամբարներից: Էմինեան ազգագրական ժողո-
վածու, Ա: Մոսկուա-Ալեքսանդրապոլ: 1901: 388 էջ:
16. Մխիթարեանց Աղ. Տաղեր ու խաղեր, Ալեքսանդրապոլ: Գևորգ Սանոյանի տպարան:
1900: 260 էջ:

17. Նահապետյան Պ. *Փանիկ գյուղի պատմություն*: Երևան: Հեղ. հրատ.: 2021: 156 էջ:
18. *Նախապաշարմունք* Աշխատասիրեց Յովհաննես Նազարեանց, հատ.1, Տփղիս: Յովհաննես Մարտիրոսեանցի տպարան: 1878: 99 էջ:
19. Քաջբերունի Հայկական սովորություններ: Ազգագրական հանդես: VII-VIII գիրք: Թիֆլիս: Տպ. Մարտիրոսեանցի: 1901: 528 էջ:
20. Քաջբերունի Հայկական սովորություններ: Ազգագրական հանդես: IX գիրք Թիֆլիս: Տպ. Կ. Մարտիրոսեանցի: 1902: 284 էջ:
21. Օհանյան Հր. *Հայ ժողովրդական ասածներ*: Հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ: FF IV: 1211-1488: 1960:

References

1. Aghavni "Shirak"[*Shirak*], Yerevan, "Haypet" publ., b. 1-2. 1963. 520 p., 1964, 538 p. (in Armenian)
2. Armen Mk. "Heghnar Spring" [*Heghnar aghbyowr*]. Yerevan. "Haypet" publ., 1936. 206 p (in Armenian)
3. Bazeyan K., Aghanyan G. Aleksandrapol: Ethnographic AI Sketches (historio-ethnographic study)[*Aleqsandrapol.Azgagrakan e'sqizner (patmazgagrakan usumnasirut'yun)*], Yerevan-Gyumri, "Gitutyun" publ.. 2014. 117 p. (in Armenian)
4. Barseghyan P. From the folklore of Shirak [*Shiraki jhoghovrdakan banahyusut'yunic*] Archive of the Institute of Folklore Archaeology and Ethnography FF IV: 2627-2955: (in Armenian)
5. Bediryan P. Modern Armenian Phraseology [*Jhamanakacic hayereni dard'vac'abanut'yun*]. Yerevan. "Luys" publ., 1973. 231 p. (in Armenian)
6. Galstyan H. Personal Collection of Field Folklore Materials. (in Armenian)
7. Gevorgyan A. Shiraki Sayings, Jokes [*Shiraki asuyt'ner, sramtut'yunner*]. Archive of the Institute of Folklore Archaeology and Ethnography FFXII: 0917-1304. 1973. (in Armenian)
8. Lalayan E. New Bayazet, [*Nor Bayazet*], Ethnographic journal, Tiflis, Printing House of Martyrosiants, 1907, 268 p. (in Armenian)
9. Khemchyan E. The folklore heritage of Tavush [*Tavushi banahyusakan jhar'angut'yuny*], Yerevan "House of the institute of archaeology and ethnography" publ., 2020, 232 p. (in Armenian)
10. Harutyunyan S. Armenian mythology, [*Hay ar'aspelabanut'yun*], Beirut, National printing house, 2000, 528p. (in Armenian)
11. Harutyunyan S. Armenian incantations and folk Prayers, [*Hay hmayakan & jhoghovrdakan aghot'qner*], Yerevan, "House of the Yerevan university" publ., 2006, 504p. (in Armenian)
12. Harutyunyan S. A Teller Needs a Listener, [*Asoghin lsogh e' petq*], Yerevan, "Arevik" publ., 2004, 144 p. (in Armenian)
13. Ghanalanyan A. Proverb [Ar'ac'ani], Yerevan, "Armenian USSR Academy of Sciences" publ., 1960, 398 p. (in Armenian)
14. Ghrejyan L. Personal Collection of Field Folklore Materials. (in Armenian)
15. Mkhitarants Agh. Debris from the Shirak Ambars, [*P'shranqner Shiraki ambarneric*] Eminian ethnographic collection, vol. A, Moskov-Alexandrapol, 1901, 388p. (in Armenian)
16. Mkhitarants Agh. Songs and Games [*Tagher u xagher*], Alexandrapol, Gevorg Sanoyans printing house, 1900, 260 p. (in Armenian)
17. Nahapetyan P. The History of Panik Village, [*P'anik gyughi patmut'yun*], Yerevan, "Hexinakayin" publ., 2021. 156p. (in Armenian)

18. Prejudice [Naxapasharmunq], Worked by Yovhannes Nazareants, Tiflis, Printing House of Martyrosiants, 1878, p. 99 p. (in Armenian)
19. Kajberuni Armenian Customs [Haykakan sovorut'yunner], Ethnographic journal, b. VII-VIII, Printing House K. Martiroseants, Tiflis, 1901, 528p. (in Armenian)
20. Kajberuni Armenian Customs [Haykakan sovorut'yunner], Ethnographic journal, b. IX, printing house K. Martiroseants, Tiflis, 1902, 284p. (in Armenian)
21. Ohanyan Hr. Armenian folk proverbs, Archive of the Institute of Folklore Archaeology and Ethnography FF IV: 1211-1488, 1960. (in Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: 19.03.2023

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: 20.04.202

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: 10.06.2023

Տեղեկություններ հեղինակի մասին

Լուսինե Խաչատուրի ԳՈՒՇՋՅԱՆ՝ բան. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, Երևան, ՀՀ
Էլ. հասցե ghrejyan 76@mail.ru, <https://orcid.org/0000-0001-8755-3967>:

Lusine Khachatur GHREJYAN: PhD in Philology, Docent, Institute of Archaeology and Ethnography of NAS, Yerevan, RA,
e-mail: ghrejyan 76@mail.ru, <https://orcid.org/0000-0001-8755-3967>:

Лусине Хачатуровна КРЕДЖЯН: кандидат филолог. наук, доцент, научный сотрудник Института археологии и этнографии НАН РА, Ереван, РА
эл. адрес: ghrejyan 76@mail.ru, <https://orcid.org/0000-0001-8755-3967>: